ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 084

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018Թ-Ի ՄԱՅԻՍԻ 21-Ի ԹԻՎ 60 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37-րդ հոդվածի պահանջով, աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով

1.Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 2018թ-ի մայիսի 21-ի /Արենի համայնքում աղետների ռիսկի կառավարման համակարգ ստեղծելու մասին/ թիվ 60 որոշումը

2. Արենի համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.

3. Խորհրդի անդամներին՝

1) մինչև սույն թվականի մայիսի 1-ը մշակել Արենի համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

2) յուրաքանչյուր տարվա հունիսի 1 -ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

4. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ Արմեն Եսայանին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

5. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1

Արենի համայնքի ղեկավարի
06 ապրիլի 2020 թվականի N 084 որոշման

ԿԱԶՄ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Հուսիկ Սահակյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Արմեն Եսայան/համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան /աշխատակազմի քարտուղար/,

4. խորհրդի անդամներ՝
   1) ավագանի Մաքլեն Սիմոնյան,
   2) ավագանի Շահեն Անտոնյան,
   3) ավագանի Էդիկ Սիմոնյան,
   4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Արթուր Կարապետյան,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Կարեն Ենոքյան,
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Ռոման Բաղդասարյան,
դ. կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Արամ Միքայելյան,
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Ասատուր Մկրտչյան,
զ. կենսապահովման կազմակերպման պատասխանատու՝ Արա Լևոնյան,
է. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Հայկ Խաչատրյան,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Ավետիք Ասատրյան,
թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Արամ Հարությունյան,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Կարինե Մանուկյան:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

Հավելված N 2
Արենի համայնքի ղեկավարի
06 ապրիլի 2020 թվականի N 084 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Արենի համայնքի ԱՌԿ խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Արենի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ Համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող բաժինների համար, ինչպես նաև Համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենք կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի նախապատրաստական գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) իրականացնում են համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտում,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) ԱՌՆ և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) Համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածմանը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստում է Համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) իրականացնում է հրդեհների կանխարգելման աշխատանքներ՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) կազմակերպում և անցկացնում է վարժանքներ:

2. ԱՌԿ խորհրդի արձագանքման գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) Համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխումը,

8) շինարարական աղբի տեղափոխումը,

9) ճանապարհների մաքրումը և նոր տարանցիկ ճանապարհների հիմնումը,

10) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրում համայնքի տարածքից ու ճանապարհներից, նոր տարանցիկ ճանապարհների հիմնում, կամուրջների վերականգնում,

11) առաջին օգնության իրականացումը,

12) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողություն,

13) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

14) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը:

15) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

16) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցումը,

17) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպումը,

18) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերումը, գրանցումը և ուղղորդումը համապատասխան սոցիալական ծառայություններ,

19) կազմակերպում է երեխաների վերամիավորումն ընտանիքներին:

20) աղետից հետո կազմակերպում է ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատումը,

21) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 085

Ս/Թ-Ի ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՊԵՍ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ-ում Արտակարգ դրություն հայտարարելու 16-ը մարտի 2020թ-ի կառավարության թիվ 298-Ն և Պարետի 24-ը մարտի 2020թ-ի թիվ 15-Ն որոշումները՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1.Հետաձգել Ս/թ-ի ապրիլի 21-ին Արենիի համայնքապետարանի կողմից նախապես հայտարարված համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ-վաճառքը:

2.Հետագա քայլերի մասին կտեղեկացվի ս/թ-ի մայիսի 14-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 086

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՄՀԵՐ ՄՀԵՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.125ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության, 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Մհեր Մհերյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.125 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0078-0002, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, հասցեն՝ գ. Արենի 43-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 1) հողատեսքը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 087

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00530ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության, 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.0053 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0034-, գործառնական նշանակությունը՝ այլ) հողատեսքը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 088

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է*՝

1. Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:

2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 089

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,6490 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի, 8-րդ մասի, 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համասեփականատեր Անուշավան Արամի Հայրապետյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***՝

Արենի համայնքի խաչիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիներ Անուշավան Արամի Հայրապետյանին, Ալվարդ Պետրոսի Ղազարյանին, Արմինե Անուշավանի Հայրապետյանին և Հայրապետ Անուշավանի Հայրապետյանին համասեփականության իրավունքով պատկանող 0,6490 հա գյուղատնտեսական նշանակության հողամասում (ծածկագիրը՝ 10-025-0107-0286, վկայականի համարը՝ 1264679, գործառնական նշանակությունը՝ վարելահող) անասնագոմ կառուցելու համար հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**